Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի ԹԻՎ ԹԻՎ 2-Ա, 3-Ա, 4-Ա, 5-Ն, 6-Ա ԵՎ 7-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 2-Ա որոշման նախաբանում անհրաժեշտ է հղում կատարել նաև Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերին:

Որոշման 1-ին կետում թիվ 65 որոշման բառերից հետո գրառված մեջ բառն անհրաժեշտ է փոխարինել 1-ին կետում բառերով և շարադրել որոշման 2-րդ կետը, որպես 1-ին կետի շարունակություն:

Որոշման 2-րդ կետում «դրամ թիվը» բառերից հետո անհրաժեշտ գրառել «և բառերը», իսկ «դրամ թվով» բառերից հետո՝ «և բառերով» բառերը:

Թիվ 3-Ա որոշման նախաբանում անհրաժեշտ է հղում կատարել նաև Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 4-րդ մասերին, իսկ նույն օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետին կատարված հղումը սխալ է:

Որոշման տեքստի վերջում «խմբագրությամբ» բառից հետո անհրաժեշտ էր գրառել «համաձայն հավելվածի» բառերը, բացի այդ որոշման անբաժանելի մաս համարվող հավելվածի դրույթների համարակալումը սխալ է կատարված, իսկ 2-րդ կետը չի համապատասխանում «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասին (համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնը քաղաքական պաշտոն է, այլ ոչ թե հայեցողական):

Թիվ 4-Ա որոշման նախաբանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին կատարված հղումը սխալ է: Անհրաժեշտ է հղում կատարել նաև Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերին:

Բացի այդ որոշման տեքստի վերջում «խմբագրությամբ» բառից հետո անհրաժեշտ է գրառել «համաձայն հավելվածի» բառերը:

Որոշման թիվ 1 հավելվածի 2-րդ կետում նշված պաշտոնի անվանումն անհրաժեշտ է համապատասխանեցնել ՀՀ կրթության և գիտության նախարարի 2007 թվականի հունվարի 26-ի թիվ 29-Ն հրամանի 1-ին կետով հաստատված ՀՀ պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակի (թիվ 1 հավելված) 2-րդ կետում նշված պաշտոնի անվանմանը, իսկ 20-րդ կետում գրառված պաշտոնի անվանումն անհրաժեշտ է համապատասխանեցնել նշված հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածի 18-րդ կետի դրույթներին:

Նույն հավելվածի 7-րդ և 8-րդ կետերում նշված պաշտոնների հաստիքային միավորները չեն համապատասխանում ՀՀ կրթության և գիտության նախարարի վերը նշված հրամանի 1-ին կետով հաստատված թիվ 1 հավելվածի պահանջներին:

Թիվ 5-Ն որոշման 1-ին կետը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի դրույթներին:

Թիվ 6-Ա որոշման հավելվածում 4-րդ տողի 7-րդ սյունակում նշված հողամասի վարձավճարի չափը չի համապատասխանում ՀՀ հողային օրենսգրքի 81-րդ հոդվածի 3-րդ

մասի դրույթին, համաձայն որի պետության և համայնքների սեփականության հողամասերի տարեկան վարձավճարի չափը չի կարող պակաս լինել հողի հարկի տարեկան դրույքաչափից:

Թիվ 7-Ա որոշման հավելվածի 2-րդ տողի 6-րդ սյունակում հողամասի օտարման նպատակը նշված է ոչ հստակ (հիմք՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետ), իսկ 3-րդ և 4-րդ տողերում նշված բնակավայրերի նպատակային նշանակության հողամասերի աճուրդով օտարման նպատակը չի համապատասխանում հողամասերի գործառնական նշանակություններին (հիմք՝ ՀՀ հողային օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մաս), նույն հավելվածի 1-րդ, 3-րդ և 4-րդ տողերի 9-րդ սյունակում գրառված թվերն անհրաժեշտ է փոխարինել 141.9 թվով (հիմք՝ ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի թիվ 1023-Ն որոշում) և համապատասխան ուղղումներ կատարել հողամասերի աճուրդով վաճառքի մեկնարկային գներում:

Կատարող՝ Շ. Շաքարյանց
12.02.2021թ.